ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ.Անանյանի և նախագահի տեղակալ Մ. Փաշայանի

Սինգապուրի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

հաշվետվություն

1. Անուն, ազգանուն

Դավիթ Անանյան, Միքայել Փաշայան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

ՀՀ պետական եկամուտների կեմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

ք.Սինգապուր, 2018թ. սեպտեմբերի 5-ից 11-ը

4. Հրավիրող կողմը

Սինգապուրի համագործակցության կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

- Սինգապուրի հարկային վարչարարության, պետական կառավարման համակարգի և կոռուպցիայի դեմ պայքարի փորձի ուսումնասիրում,

- Սինգապուրի հարկային մարմնի բիզնես գործընթացներին և էլեկտրոնային կառավարման համակարգերի աշխատանքին ծանոթացում և դրանք Հայաստանում ներդնելու հնարավորությունների ուսումնասիրում.

6. Քննարկված թեմաները՝

- Հարկային մարմնի գործունեության կազմակերպումը և ռազմավարական պլանավորումը, աշխատանքների կառավարումը և հարկային վարչարարության նպատակներով կիրառվող գործիքները.

- Հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայությունները, այդ թվում՝ հարկ վճարողների հաշվառումը, հարկ վճարողներին իրազեկումը, հարկային հաշվետվությունների ներկայացումը, փաստաթղթերի գրանցումը, հարկերի վճարումը և այլն.

- Պետական կառավարման համակարգի գործունեության արդյունավետության ապահովումը, այդ թվում՝ կադրերի նախապատրաստման ու վերապատրաստման կազմակերպումը, ճշգրիտ ընտրությունն ու որակավորումը, առաջխաղացումը և կարգապահության ամրապնդումը.

- Հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումները և հսկողական այլ աշխատանքները.

- Խաղատների գործունեության հարկման կարգավորումը և հսկողությունը, խաղատների հարկման օբյեկտի և հարկվող շահույթի հաշվարկման կանոնները.

- Հարկային մարմնում իրականացվող վերլուծական աշխատանքները, կիրառվող առաջավոր SS տեխնոլոգիաները, վերլուծությունների արդյունքներով ռիսկերի բացահայտումը և գնահատումը.

- Սինգապուրում իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականությունը և դրա իրագործման մեխանիզմները.

- Այցելություն Լի Քուան Յույի դպրոց.

- Այց Սինգապուրի ազգային ջրային կոմիտե:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- Հանդիպումներ

ՊԵԿ պատվիրակությանն ընդունել է Սինգապուրի հարկային մարմնի ղեկավար, ներքին եկամուտների (IRAS) հանձնակատար Նգ Վայ Չունը: Կայացել են նաև մի շարք աշխատանքային հանդիպումներ Սինգապուրի հարկային մարմնի տարբեր ստորաբաժանումների ղեկավար անձնակազմի հետ:

- Ելույթներ

Հանդիպումների ընթացքում ՊԵԿ պատվիրակության կողմից սինգապուրյան գործընկերներին համառոտ ներկայացվել են ՀՀ հարկային համակարգը, ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի գործունեության կազմակերպումը, կառուցվածքը, գործող կառավարման համակարգերը և իրականացվող աշխատանքները:

- Քննարկված հարցեր

Հաշվի առնելով Սինգապուրի պետական եկամուտների համակարգի զարգացվածության բարձր մակարդակը և տարբեր ոլորտներում կատարված բարեփոխումների արդյունքում գրանցած հաջողություններն ու առաջատար փորձը, Սինգապուրի հարկային մարմնի տարբեր ստորաբաժանումների ղեկավար անձնակազմի հետ հանդիպումների ընթացքում սինգապուրյան գործընկերները հայկական կողմին ներկայացրին պետ.եկամուտների կառուցվածքը, աշխատանքային գործընթացները և կիրառվող վարչարարական մեխանիզմները: Այդ թվում՝

- *Ռազմավարական պլանավորման մասնաճյուղի* ղեկավարությունը ներկայացրել է IRAS-ի կառուցվածքը, ռազմավարական ծրագրերը և տեսլականը.

- *Տեղեկատվական հաղորդակցությունների սպորաբաժանման* ղեկավարությունը ներկայացրել է սինգապուրյան հարկային մարմնում իրականացվող էլեկտրոնային գործընթացները.

- *Հարկային օրինապահության և վերլուծության սպորաբաժանման* ղեկավարությունը ծանոթացրել է սինգապուրյան հարկային մարմնի հարկ վճարողների կարգապահության ամրապնդման ծրագրերին, ռիսկերի վերլուծության և ստուգումների գործընթացին.

- *Կազմակերպությունների հարկման սպորաբաժանման* ղեկավարությունը տրամադրել է էլեկտրոնային տեղեկատվություն Սինգապուրում ընկերությունների հարկային պարտավորությունների գնահատման և հսկողության համար կիրառվող եղանակների և գործիքների մասին.

- *Կոռուպցիոն գործընթացների հետաքննության բյուրոյի (CPIB)* ղեկավարությունը ներկայացրել է բյուրոյի ստեղծման և կայացման պատմությունը, ինչպես նաև վերջին տասնամյակի հիմնական ձեռքբերումները, որպես առանձին անկախ պետա-

կան մարմին գործելու առավելությունները և գրանցված հաջողությունները, կոռուպցիոն դեպքերի հետաքննության վերաբերյալ վիճակագրական տվյալները, կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը բնութագրող ցուցանիշները.

IRAS-ի կառուցվածքը և բնույթը

Սիգնապուրի հարկային մարմինը ղեկավարում է Աշխատակազմի ղեկավարը, ով կառավարում է հարկային մարմնի աշխատանքային ընթացիկ գործընթացները: Աշխատակազմի ղեկավարը ենթակա է Սինգապուրի հարկային մարմնի խորհրդին, որը բաղկացած է նախագահից և ութ անդամից, այդ թվում՝ Աշխատակազմի ղեկավարը և այլ պետական ու մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: Հարկային մարմնի ռազմավարական ծրագիրը հաստատվում է խորհրդի կողմից, որը նաև վերահսկում է հարկային մարմնի գործառույթների պատշաճ իրականացումը: Խորհուրդի անդամները հանդիպում են տարին երեք անգամ՝ քննարկելու հարկային մարմնի հիմնական քաղաքական ուղղությունները, հաստատելու ֆինանսական հաշվետվությունները, տարեկան բյուջեն և հիմնական ծրագրերը:

Ընդհանուր առմամբ, Սինգապուրի հարկային մարմինն աշխատում է ինքնաֆինանսավորման մոդելով և ունի ֆինանսական անկախություն, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների կառավարման ճկունություն: Ֆինանսական հաշվետվությունները, տարեկան կտրվածքով ներկայացվում են Ազգային Ժողով:

IRAS-ը 25 տարիների ընթացքում անցել է զարգացման 4 փուլ.

1. 1992թ. «Արդյունավետ հարկային մարմին»

2. 1998թ. «Հարկ վճարողներին ծառայություն մատուցող կազմակերպություն» որտեղ հարկ վճարողները ընկալվում են, որպես բարձր արժեք ունեցող հաճախորդներ:

3. 2005թ. «Հարկային մարմինը՝ որպես հարկ վճարողների գործընկեր կազմակերպություն», ինչը հետապնդում էր համատեղ ուժերը ազգին ծառայեցնելու նպատակ:

4. 2016թ. «Հարկ վճարողների համար աջակից կառույց», ինչն ապահովեց անցում թվայնացված և վերլուծական կարողություններով օժտված համակարգի:

Սինգապուրի հարկային մարմինը երկու տարին մեկ անգամ հարկ վճարողների շրջանում իրականացնում է սոցիալական հարցում, հարկային մարմնի աշխատանքը գնահատելու նպատակով: Արդյունքները ցույց են տվել, որ 2017 թվականի դրությամբ հարկ վճարողների բավարարվածության մակարդակը Սինգապուրում 97 տոկոս է:

Բացի այդ, երկու տարին մեկ անգամ, աշխատակիցների կողմից իրականացվում է հարկային մարմնի կողմից աշխատանքների կազմակերպման կատարողականի գնահատում՝ պարզելու վերջինիս աշխատանքային գործընթացի կազմակերպման արդյունավետության մակարդակը, որի արդյունքները իրենց հերթին համեմատվում են Սինգապուրի պետական կառավարման համակարգի համար սահմանված չափանիշների հետ:

Հարկային մարմնի կողմից մատուցվող ծառայությունները, այդ թվում՝ գրանցում, հաշվետվությունների ներկայացում, հարկերի վճարում

Սինգապուրում հարկ վճարողների թիվը շուրջ 4.5 մլն է, որից 2.3 միլիոնը ֆիզիկական անձիք են, որոնց համար ներդրված է ինքնահայտարարագրման և հարկերի ինքնուրույն վճարման սկզբունք: Ի տարբերություն ՀՀ-ի, Սինգապուրում ֆիզիկական անձանց աշխատավարձ վճարող կազմակերպությունները հարկային մարմնին ամսական կտրվածքով ներկայացնում են վճարված եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն: Տարեվերջում, այդ տեղեկատվությունների հիման վրա հարկային մարմնի կողմից նախապես լրացվում է հայտարարագիր, որը էլեկրոնային տարբերակով ուղարկվում է հարկատուներին՝ նրաց կողմից հաստատման կամ դրանցում փոփոխություններ կատարելու նպատտակով: Հարկատուն համաձայն լինելու դեպքում հաստատում է ներկայացված հաշվետվությունը: Անհրաժեշտության դեպքում ֆիզիկական անձի կողմից կատարվում են փոփոխություններ՝ օրինակ նշելով այլ կողմնակի աշխատանքից ստացված եկամուտներ, որոնք ներառված չեն հաշվետվությունում: Եթե հարկատուի կողմից սահմանաված ժամկետում ուղարկված հաշվետվության հետ կապված որևէ արձագանք չի լինում, ապա համարվում է, որ հարկ վճարողը համաձայն է ներկայացված տարբերակին:

Բացի ֆիզիկական անձանցից հարկատու են հանդիսանում 195.000 կազմակերպություններ, 97000 ԱԱՀ վճարողներ, 384.000 ակցիզային հարկ

վճարողներ, 86.000 խաղատներից և շահումով խաղերից եկամուտ ստացված հարկ վճարողներ, գույքահարկ վճարողներ 1.4 միլիոն և այլն: Սինգապուրում հարկատուի կողմից վճարումները կատարվում են ամսական կտրվածքով իսկ եկամտային հաշվետվությունները ներկայացվում են տարեկան կտրվածքով: Հարկային մարմնի կողմից տարեկան հավաքագրվում է շուրջ 60մլրդ սինգապուրյան դոլար հարկ (շուրջ 43.7 մլրդ հաշվարկված ԱՄՆ դոլարով):

Կիրառվող ՏՏ տեխնոլոգիաները

Պատվիրակությանը ներկայացվել է Սինգապուրի հարկային մարմնում էլեկտրոնային համակարգի ներդրման գործընթացը, որը սկսվել է 1989թ-ից: Էլեկտրոնային համակարգի թարմացումները միջինում կատարվում են ութ տարին մեկ անգամ: Վերջին ամբողջական թարմացումը կատարվել է 2013թ.-ին, իսկ 2017 թ-ին սկսվել է գործող համակարգի ամբողջական թվայնացման և նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ հարկային վճարումների էլեկտրոնային նոր համակարգի աստիճանական ներդրման գործնթացը, որի լիարժեք գործարկումը նախատեսվում է 2023թ.-ին:

Ի լրումն վերը նշվածի՝ պատվիրակության ներկայացուիչներին տեղեկացվեց այն մասին, որ Սինգապուրում հարկերի էլեկտրոնային վճարումը հնարավոր է անմիջապես հարկ վճարողի բանկային հաշվից: Որը շահագրգռում է առևտրային բանկերին հնարավորինս շուտ միանալ այդ համակարգին:

Ռիսկերի գնահատում

Սինգապուրի հարկային մարմնի կողից հայտնբերվում են ռիսկերը, սահմանվում է ռիսկերի առաջնահերթություն, վերլուծվում են ընտրված կազմակերպությունների ռիսկերի հիմքերը և պատճառները և մշակվում են դրանց վերացմանն ուղղված թիրախային ծրագրեր՝ մասնավորապես իրականցվում են ուսուցողական ծրագրեր և ուղարկվում են ծանուցումներ: Որոշ դեպքերում կիրառվում են տուգանքներ և առաջադրվում են մեղադրանքներ:

Ստուգումների իրականցում

Տարեկան կտրվածքով ստուգման են ենթարկվում շուրջ 11.000 կազմակերպու-թյուններ (որոնց մեջ ներառված են նաև փաստաթղթային ուսումնասիրությունները և

հարկ վճարողների հետ աշխատանք իրականացնելու արդյունքում կատարված ճշտումները), մոտ 230-ի մոտ իրականացվում է հետաքննություն:

Խաղատները և դրանց հարկումը

Ուսումնասիրվել են խաղատների, շահումով խաղերի (ներառյալ խաղադրույքներ ընդունող կազմակերպությունների) հարկման մեխանիզմները: Սինգապուրում խաղատների և շահումով խաղերի հարկման օբյեկտ է հանդիսանում շրջանառությունը (կատարված խաղադրույքները): Կախված խաղերի և խաղադրույքների տեսակից կատարվում են տարբեր նվազեցումներ և կիրառվում են հարկման տարբեր տոկոսադրույքներ:

Կոռուպցիայի դեմ պայքար

2016 թ.-ի տվյալներով Սինգապուրը ճանաչվել է աշխարհում կոռուպցիայի ամենացածր մակարդակ ունեցող երկրներից 6-րդը: Սինգապուրում գործում է Կոռուպցիոն գործերի հետազոտման բյուրո, որը անկախ է բոլոր պետականան հիմնարկներից: Վերջինիս ղեկավարը հաշվետու է վարչապետին: Բյուրոն իր աշխատանքը կազմակերպում և գործերին ընթացք է տալիս տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա: Այս բյուրոյում ուսումնասիրվում են ինչպես պետական կառավարման համակարգին առնչվող, այնպես էլ մասնավոր հատվածում առկա կոռուպցիոն գործերը/դրսևորումները: Կոռուպցիոն գործերում ներգրավված լինելու դեպքում սահմանվում է տուգանք և/կամ կայացվում է դատապարտման որոշում: Կոռուպցիայի ցածր մակարդակի պատճառով Բյուրոյի ստացած բողոքների քանակը փոքր է (օրինակ. 2017 թ.-ին ստացվել է 387 բողոք, որնցից ընթացք է տրվել 103-ին): 2017 թ.-ին կոռուպցիոն դեպքերի 82%-ը վերաբերվում է եկել ֆիզիկական անձանց, ովքեր առաջարկել կամ ստացել են կաշառք: 10%-ը պետական համակարգի աշխատողին կաշառք առաջարկելու դեպքերն են (երբ պետական պաշտոնյան հրաժարվել է կաշառքից և գործ է հարուցվել կաշառք առաջարկողի դեմ) իսկ դեպքերի 8%-ը վերաբերվում է պետական կառավարման համակարգի աշխատողներին, ովքեր ստացել կամ պահանջել են կաշառք: Կոռուպցիոն դեպքերի հիմքով դատապարտվածների 94%-ը ֆիզիկական անձիք են (մասնավոր հատված ներառյալ գործարարները) և միայն 6%-ը պետական աշխատակիցներ:

- *Այց Սինգապուրի Լի Քուան Յույի անվան Հանրային քաղաքականության համալսարան*

Սինգապուրի Լի Քուան Յույի անվան Հանրային քաղաքականության համալսարանի ղեկավարության հետ բանակցել են հանրային կառավարման և հանրային քաղաքականության ասպարեզներում համատեղ կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները, Լի Քուան Յույի անվան համալսարանի և ՊԵԿ ուսումնական կենտրոնի միջև հետբուհական կրթության ոլորտում համագործակցության հեռանկարները:

- Այց Սինգապուրի ազգային ջրային կոմիտե

Սինգապուրի ազգային ջրային կոմիտեն համարվում է ռեսուրսների արդյունավետ կառավարման լավագույն մոդելն ունեցող կառույց, որտեղ հայկական պատվիրակությունը ծանոթացավ կառույցիր հաջորդ 99 տարիների համար հաստատված ռազմավարությանը:

-*Այց քաղծառայության քոլեջ*

Սինգապուրի քաղծառայության քոլեջը տարեկան կտրվածքով ապահովում է 145.000 պետական աշխատողների վերապատրաստում դասընթացների և կրթական ծրագրերի միջոցով՝ ապահովելով նրանց մասնագիտական զարգացումը: Քոլեջը համագործակցում է նաև այլ երկրների հետ իրականացնելով համատեղ ծրագրեր պետական աշխատակիցների ուսուցում և վերապատրաստումներ: Կրթական գործընթացին ներգրավված են ինչպես դասախոսներ, այնպես էլ պետական համակարգի նախկին աշխատակիցներ և գործող բարձր որակավորում ունեցող կադրեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հարկային մարմնի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել հետագա համագործակցության և որոշ ոլորտներում ավելի խորացված փորձի փոխանակման շուրջ:

Լի Քուան Յույի անվան Հանրային քաղաքականության համալսարանի ղեկավարը հրավիրվել է առաջիկայում այցելել Հայաստան՝ ՊԵԿ ուսումնական կենտրոնի հնարավորություններին ծանոթանալու և փոխգործակցության ծրագիր ուրվագծելու նպատակով:

Քաղծառայության քոլեջի հետ քննարկվել են ՊԵԿ ուսումնական կենտրոնի հետ հետագա համագործակցության ծրագրերը

9. Գործուղվող

Դավիթ Անանյան

Միքայել Փաշայան

10. Ստորագրություն, ամսաթիվ

14 սեպտեմբեր 2018թ.